ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ----- 2022 թվականի №-Ա
քաղ. Երևան

ՍԻՐՈՒՆ ԼՈՐԻԿԻ ԹՈՐՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) 2022 թվականի մարտի 23-ի №07/11.1/2073-2022 գրությամբ ներկայացված տեղեկատվությունն առ այն, որ էլեկտրա-մագնիսական իրավիճակների հետազոտումների արդյունքում հայտնաբերվել է 890.0-902.5ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթում ճառագայթող բջջային կապի վերահաղորդակ, որը տեղակայված է Երևան քաղաքի Ռոմանոս Մելիքյան փողոցի №43 առանձնատան (սեփականության իրավունքով գրանցված է Սիրուն Լորիկի Թորոսյանի անվամբ) բակում,

բ) առանց թույլտվության ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը դադարեցնելու վերաբերյալ Սիրուն Լորիկի Թորոսյանին ուղղված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2022 թվականի մարտի 25-ի №ՍՇ/34.2-Մ2-9/908-2022 գրությունը, որին ի պատասխան Սիրուն Լորիկի Թորոսյանը հայտնել է, որ Երևան քաղաքի Ռոմանոս Մելիքյան փողոցի №43 հասցեում առանց թույլտվության շահագործվող բջջային կապի վերահաղորդակ տեղակայված չէ,

գ) Հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 20-ի №ԳԲ/34.2-Մ2-9/1251-2022 գրությանն ի պատասխան Նախարարության 2022 թվականի մայիսի 11-ի №01/11.1/3485-2022 գրությունը, որով վերջինս հայտնել է, որ Սիրուն Լորիկի Թորոսյանի կողմից ներկայացված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը, միաժամանակ կրկին իրականացված էլեկտրամագնիսական իրավիճակների հետազոտումների արդյունքում պարզվել է, որ շարունակվում է 893.5ՄՀց ռադիոհաճախականության անօրինական շահագործումը,

դ) Հանձնաժողովի 2022 թվականի մայիսի 19-ի №ՍՇ/34.2-Մ2-9/1585-2022 գրությունը, որով Սիրուն Լորիկի Թորոսյանը տեղեկացվել է Նախարարության 2022 թվականի մայիսի 11-ի №01/11.1/3485-2022 գրության և հարցի պարզաբանման նպատակով 2022 թվականի մայիսի 24-ին Հանձնաժողովում կազմակերպվող քննարկման վերաբերյալ,

ե) 2022 թվականի մայիսի 24-ին Հանձնաժողովում կայացած քննարկման արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունը՝ Նախարարությունը 2022 թվականի հունիսի 9-ի №01/11.1/4408-2022 գրությամբ տեղեկացրել է, որ կրկին իրականացված էլեկտրամագնիսական իրավիճակների հետազոտումների արդյունքում Երևան քաղաքի Ռոմանոս Մելիքյան փողոցի №43 հասցեում հայտնաբերվել և հոսանքազերծվել է բջջային կապի անօրինական շահագործվող վերահաղորդակը (որի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն),

զ) որ իրավասու պետական մարմնի ներկայացրած տեղեկատվությամբ փաստվել է Սիրուն Լորիկի Թորոսյանի կողմից առանց թույլտվության 890.0-902.5ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետի «ե» ենթակետը, 60-րդ հոդվածը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Սիրուն Լորիկի Թորոսյանին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել առանց թույլտվության 890.0-902.5ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը և այդ մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Հանձնաժողովին:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սիրուն Լորիկի Թորոսյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- ---------2022թ.